Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ՝ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՁՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 մարտի, 2024 թ.)

«Եւ եղեւ ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ եւ ետ նոցա, եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա...»
(Ղուկ. ԻԴ. 30–31)։

Քրիստոսի Սուրբ Հարությունը տոնախմբելու համար համախմբված սիրելի՛ քրիստոնյաներ,

«Չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ. 6) խոսքերը, որոնցով Քրիստոսի գերեզման այցելած յուղաբեր կանանց դիմավորեց հրեշտակը, ամենքիս համար հնչում են որպես ավետիս։ Սակայն Քրիստոսի թաղումից հետո աշակերտների՝ անորոշության մեջ դեգերող միտքն ի վիճակի չէր ընկալելու այս խոսքերում թաքնված ուրախությունը։ Անորոշության ու հուսահատության խավարը ցրելու համար, հարությունից հետո, Քրիստոս տարբեր վայրերում հայտնվում է Իր աշակերտներին եւ Իրեն հետեւող բազմաթիվ այլ մարդկանց։

Ղուկասի ավետարանի վերջին՝ քսանչորսերորդ գլխում պատմվում է աշակերտների ալեկոծ հոգիներն ի ցույց դնող խորհրդավոր մի պատմություն, այն Սուրբ Գրքում վերնագրված է որպես «Էմմավուսի ճամփորդները»։

Աշակերտներից երկուսը քայլում էին դեպի Երուսաղեմի հարակից բնակավայրերից մեկը՝ Էմմավուս, երբ ճանապարհին նրանց է միանում Ինքը՝ հարուցյալ Տերը։ Նա երեւում է ոչ այն տեսքով, որով սովոր էին նրան տեսնել աշակերտները, ուստի վերջիններս չեն ճանաչում իրենց Ուսուցչին։ Այն պահին, երբ Հիսուս միանում է աշակերտներին, նրանք խոսում եւ վիճում էին վերջին մի քանի օրերի ընթացքում Երուսաղեմում տեղի ունեցած իրադարձությունների շուրջ։ Աշակերտները փորձում էին պատասխան գտնել մի կարեւոր հարցի. ինչ պատահեց Հիսուսին, Ով

ասում էր, թե եկել է փրկելու, բայց Ինքը խաչվեց, հետո թաղվեց, եւ հիմա էլ պարզվում է՝ մարմինը չկա, իսկ յուղաբեր կանանց հանդիպած հրեշտակն էլ հայտնել է, թե Հիսուս կենդանի է։

Էմմավուսի ճամփորդները տարակուսած էին. նրանք վիճում էին միմյանց հետ, քանի որ անորոշության սարսափի մեջ էին։ Թեեւ նրանք Քրիստոսի տասներկու աշակերտներից չէին, սակայն քաջատեղյակ էին այն ողջ ճանապարհին, որն Իր քարոզության շրջանում անցել էր Քրիստոս։

Տասներկուսի եւ Քրիստոսի Երուսաղեմ մուտքի ժամանակ Փրկչին դիմավորող ամբոխի նման սրանք էլ Քրիստոսի մեջ տեսել էին այն Մեսիային, Ով պետք է գար՝ փրկելու իրենց Իսրայելը։

Հիսուս եկավ, քարոզեց, հրաշքներ գործեց, հույսը վառեց, «եղաւ մարգարէ մարդ, հզօր՝ գործերով եւ խօսքերով, Աստծու եւ ամբողջ ժողովրդի առաջ», սակայն նույն այդ ժողովուրդը, իշխանություններից վախենալով, քահանայապետերն ու իշխանավորներն էլ ժողովրդին հաճոյանալով, հանցավոր դաշինքով՝ «Նրան մատնեցին մահուան դատաստանի ու խաչը հանեցին նրան» (Ղուկ. ԻԴ. 19–20)։

Ավագ շաբաթվա ընթացքում մենք եւս անցանք Էմմավուսի ճամփորդներին հուսահատության հասցրած իրադարձությունների միջով։ Նախ երգեցինք «Օվսաննա ի բարձունս»՝ տոնելով Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ, հետո մասնակցեցինք Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատմանը, ապա ինչ-որ տեղ լուռ եւ անտարբեր, ինչ-որ տեղ հանցավոր ականատեսը եղանք մատնության, Հիսուսի հանդեպ անարդար դատավճռին, չարչարանքներին ու խաչելությանը, մահվանը եւ... թաղմանը։

Տարիների փորձառությամբ գիտենք, որ Ավագ շաբաթվա ողբերգական դեպքերը միշտ պսակվում են Հարության ավետիսով։ Մենք, որ Քրիստոսին ճանաչել ենք որպես հարուցյալ Փրկիչ, մենք, որ մշտապես տեսնում ենք կյանքի հաղթանակը մահվան հանդեպ, հասել ենք մի հանգրվանի, երբ մեզանից հեռացել է հույսը՝ թողնելով անորոշության եւ տագնապի մեջ։

Ահա հենց այս պահին, Հիսուսի խոսքերը շանթի նման պայթում են աշակերտողների գլխավերեւում. «Ո՜վ անմիտ եւ թուլասիրտ մարդիկ, որ դժուարանում էք հաւատալ այն ամենին, որ ասացին մարգարէները։ Չէ՞ որ Քրիստոս պէտք է նոյն այդ չարչարանքները կրէր եւ այնպէս մտնէր իր փառքի մէջ» (Ղուկ. ԻԴ. 25–26)։

Այս կշտամբանքից հետո հարուցյալ Տերն Էմմավուսի ճամփորդներին վերապատմում է այն ամենը, ինչ քարոզել էր շուրջ երեք տարիների ընթացքում՝ սկսելով Օրենքից ու մարգարեներից՝ հասնելով մինչեւ Հարություն։

* * *

Մեղքի պատճառով ընկած մարդուն բնորոշ բնավորություն են ի ցույց դնում աշակերտները. Իր քարոզության ողջ ընթացքում Քրիստոս հստակորեն պատմել էր այն մասին, որ Իր առաքելությունը երկրավոր բարիքներին հասնելու համար չէ, այլ երկնային արքայության համար։ Աշակերտները, ովքեր ավելիով պետք է ընկալած լինեին այս ամենը, փաստորեն մնացել էին գիտակցության այն նույն աստիճանում, որտեղ էին Քրիստոսին չընդունած հրեաները։ Նրանք լսել էին Քրիստոսին, սակայն Տիրոջ խոսքերը մեկնաբանել ու ընկալել էին այն ձեւով, որն իրենց էր ձեռնտու եւ հաճելի, ուստի եւ, երբ իրենց պատկերացումները չէին իրականացել, իրենց խաբված էին զգացել՝ հայտնվելով հուսահատության մեջ։

Սիրելինե՛ր, այս վիճակը ծանոթ եւ բնորոշ է յուրաքանչյուրիս. շատ հաճախ, մենք առօրյա զրույցներից մինչեւ հանրային ելույթները, հնչող բառերն ու մտքերը մեկնաբանում ենք ըստ մեր ընկալումների, որից հետո էլ, բնականաբար, հուսախաբ ենք լինում։

Հասնելով Էմմավուս՝ «Յիսուս պատճառ բռնեց, թե ինքը գնալու է աւելի հեռու տեղ։ Իսկ նրանք շատ ստիպեցին նրան ու ասացին. «Մեզ մօտ գիշերիր, որովհետեւ երեկոյ է, եւ օրը տարաժամել է»։ Եւ նա ներս մտաւ՝ նրանց հետ այնտեղ գիշերելու» (Ղուկ. ԻԴ. 28–29)։

Աշակերտները, թվում է, թե պետք է արդեն անծանոթ ուղեկցի մեջ ճանաչած լինեին իրենց Ուսուցչին, բայց նրանց աչքերը շարունակում էին բռնված մնալ։ Չճանաչելով հանդերձ, աշակերտներն ստիպում են Հիսուսին՝ մնալու իրենց հետ, կարծես զգալով, որ զրուցում են մեկի հետ, Ով կարող է վանել իրենցից հուսահատությունն ու լուսավորել անորոշության խավարը։

* * *

Սուրբ Հարության ճրագալույցի այս երեկոյան տեսնում ենք, որ Քրիստոսի հետ անցել ենք երկար մի ճանապարհ, ավելի երկար, քան

Երուսաղեմն Էմմավուսից բաժանող տասնմեկ կիլոմետրերը։ Եկել ու հասել ենք մի հանգրվանի, որտեղ մեզանից յուրաքանչյուրը պետք է անի իր կյանքի կարեւորագույն հրավերը՝ խնդրելով Հարուցյալ Տիրոջը ներս գալ եւ գիշերել ու ապրել մեր ներսում՝ այն սուրբ օթեւաններում, որոնք պետք է որ արդեն պատրաստած լինեինք Տիրոջ բնակության համար։

Սուրբ Ղուկաս ավետարանիչն ասում է. «Եւ երբ նա սեղան նստեց նրանց հետ, հաց վերցնելով՝ օրհնեց, կտրեց այն եւ տուեց նրանց։ Եւ նրանց աչքերը բացուեցին ու ճանաչեցին նրան... » (Ղուկ. ԻԴ. 30–31)։ Տիրոջ կտրած հացը, որն արդեն իսկ հաստատված Սուրբ հաղորդության խորհուրդի իմաստն ունի, մեզ հուշում է անդրադառնալու հայտնի պատմությանը, երբ Բերկրության դրախտում սխալ պտղի ճաշակմամբ բացվեցին Ադամի ու Եվայի աչքերը եւ նրանք ճանաչեցին կյանքը։ Ավետարանական այս հրաշապատում դրվագը ցույց է տալիս միմյանց հակոտնյա երկու երեւույթներ. դրախտում Աստված պատվիրում է չուտել բարու եւ չարի գիտության ծառից, քանի որ մահկանացու կդառնանք, իսկ Վերջին ընթրիքին Տերը պատգամում է ուտել կենաց հացը, որպեսզի հավիտենական կյանքը ժառանգենք։ Եթե սխալ պտուղը մեզ զրկում է Աստծուն տեսնելու կարողությունից՝ փոխարենը մեզ տալով մեղքի գերությունը, ապա կենաց հացը բացում է մեր աչքերը՝ ճանաչելու Աստվածորդուն՝ Հիսուս Քրիստոսին եւ քայլելու մեղքի գերությունից ազատող ճանապարհով։

Էմմավուսում Քրիստոսին հյուրընկալելու ժամանակ, աշակերտները, թեպետ տեսնում էին Տիրոջը, սակայն չէին ճանաչում նրան. նրանք յուրօրինակ կուրության մեջ էին խարխափում, նման մի մարդու, ով նայել է արեգակին եւ կուրացել։

Այո՛, արեգակին նայելը կարող է մեզ կուրացնել, բայց առանց արեւի լույսի մենք ոչինչ կարող ենք տեսնել։ Եվ միայն այն պահին, երբ ընդունում ենք Արեգակին՝ Քրիստոսին, որպես կենաց լույսի աղբյուր, ահա հենց այդ ժամանակ են մեր աչքերը բացվում՝ տեսնելու, ընկալելու եւ ի վերջո ճանաչելու համար Տիրոջը։

Սիրելինե՛ր, անորոշության, տագնապի, հուսահատության եւ թուլասրտության մեր ժամանակներում ամենքս կարիքն ունենք լսելու Աստծու հորդորը, հավատալու բոլոր այն խոսքերին, որոնք մեզ փոխանցում է ավետարանիչը, ընդունելու Հիսուս Քրիստոսին որպես

Փրկիչ եւ հետեւելու Նրան, քանզի Նա է «ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը» (Հովհ. ԺԴ. 6)։

Թող որ Սուրբ Հոգու շնորհներով լցված, Հարուցյալ Աստվածորդու ձեռքն ամուր բռնած անսայթաք քայլենք դեպի հավիտենական կյանք տանող ճանապարհով, որտեղ գրկաբաց մեզ է սպասում բազմագութ եւ սիրող Հայրը։

Աստվածտեսության այս հանգրվանին հասնելով է, որ ճշմարիտ քրիստոնյաներն արդեն կարող են իրար ողջունել եւ ավետել.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. ամէն։